ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0701, ք. Արտաշատ, Շահումյան 19, հեռ. (0235) 2-20-35, էլ. հասցե՝ ararat-dataran@mail.ru, www.court.am

№ ԴԴԱ-10 12757/22
« 20 » դեկտեմբերի 2022թ.

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Ձեզ է ուղարկվում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի պահպանության ծախսերի 4214 հոդվածով (կապի ծառայություններ) փոստային կապի ծառայությունների մասով՝ (պայմանագիր PDU-34-02-22) ըստ գնման պայմանագրին կից թիվ 2 լրացուցիչ համաձայնագիրը:

Խնդրվում է Ձեր հանձնարարականը՝ նշված պայմանագրի գումարի դրական եզրակացությունը փոփոխելու համար:

Հարգանքով
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

28.02.2022թ.-ին կնքված թիվ PDU-34-02-22
Փոստային կապի ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան **20.12.2022 թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ծոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 19.02.2021թ.-ի թիվ 418-Ա հրամանով, և ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Լիլիթ Հովհաննիսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 28.02.2022թ.-ին կնքված թիվ PDU-34-02-22 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 42 021 600 (քառասուներկու միլիոն քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 60 521 600 (վեթսուն միլիոն հինգ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01.11.2022 թ.-ից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Կոմերցիոն տնօրեն
Ծոլակ Հովհաննեսյան
/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
ք. Արտաշատ, Շահումյան 19
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900411002356
Հեռ.՝ (0235) 2-20-35

Աշխատակազմի ղեկավար
Լիլիթ Հովհաննիսյան
/ստորագրություն/